ուսումնասիրությունը հայ երաժշտագիտության պատմության մեջ մի նոր էջ բաց արեց։

Լավ է այդ մեծածավալ գրքի (40 տպագրական մամուլ) շարադրությունը։ Մտքերի և կառուցվածքի հստակության, հակիրճ լեզվի շնորհիվ այդ բարդ աշխատությունը, որը կարող է պարզապես ուսումնասիրվել, կարդացվում է համեմատաբար հեշտ (մասնավորապես նրա առաջին մասը)։

Աշխատությունը միաժամանակ գրված է սիրով, ճանաչողական մեծ հետաքրքրությամբ։ Զգացվում է, որ հեղինակն իր ամբողջ պրպտուն միտքը ներդրել է այդ ուսումնասիրության մեջ։

Աշխատության հրապարակ գալը նշանակալից երևույթ է սովետական երաժշտագիտության ասպարեզում։ Այդ մոնումենտալ ուսումնասիրությունը թափանցեց հայ երաժշտության պատմության և տեսության այնպիսի գիտական խորքերը, որոնք մինչև այժմ անանցանելի էին։ Հայ մոնոդիայի պատմատեսական բազմաթիվ հարցերը մշակող և ընդհանրացնող այդ աշխատությունը հնարավորություն է տալիս ըստ ամենայնի ընկալելու հայ ազգային ժողովրդական երաժշտական հարուստ մշակույթի հրաշալի գոհարները, գիտակցված և տեսականորեն հիմնավորված, նրանցում առկա լուբորինակ և ինքնատիպ հատկանիշների ճանաչմամբ։

Վերջում չենք կարող չնշել արվեստագիտության թեկնածու Ռ. Տոթյանի մեծ և շնորհակալ աշխատանքը, որ նա կատարել է որպես գրախոսվող աշխատության խմբագիր։

Մ. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՀԻՊՈԹԵԶԻ ՄԱՍԻՆ

Աշխարհի իմացության, օբյեկտիվ ճշմարտության իմացության դիալեկտիկական պրոցեսի առանձին օղակների հետազոտությունն ունի գիտական ու գործնական անվիճելի արժեք, քանի որ այն խորացնում է մեր գիտելիքները մեր իսկ մտածողության մասին և հնարավորություն ստեղծում գիտակցականորեն գործադրել մտքի ձևերը և ըստ կարելվույն խուսափել սխալներից։

Իմացության պրոցեսի այդպիսի կարևոր օղակներից մեկը հիպոթեզն է։ Բացահայտելով հիպոթեզի նշանակությունը, Էնգելսը գրում էր, որ «բնագիտության զարգացման ձևը, որքանով որ այն մտածում է, հիպոթեզն է հանդիսանում» (Բնության դիալեկտիկա, Երևան, 1957, էջ 247)։ Էնգելսն այնուհետև նշում է, որ նոր փաստերի հայտնագործումը մարդկային դատողությունից պահանջում է բացատրության նոր եղանակներ, սկզբում միայն սահմանափակ փաստերի ու դիտողությունների վրա հիմնված հավանական գիտական ենթադրություններ, այսինքն՝ հիպոթեզներ, որոնք հետագայում ավելի ու ավելի խորանալով հասցնում են օրենքի իմացությանը։ Իմացության այդպիսի օղակը իրենից անհրաժեշտությունն է ներկայացնում, որովհետև «եթե մենք ցանկանայինք սպասել մինչև որ նյութը հստակ տեսքով պատրաստ լինի օրենքի համար, ապա դա կնշանակեր մինչև այդ ժամանակ դադարեցնել մտածողական հետազոտությունը, և հենց միայն այդ պատճառով մենք երբեք էլ օրենք չէինք ստանա» (նույն տեղում)։

Էնգելսի այս խորիմաստ դրույթները ելակետ են հանդիսացել փիլիսոփա-

յական գիտությունների թեկնածու Հ. Ա. Գևորգյանի «Հիպոթեզը և նրա դերը գիտության մեջ» հետազոտության համար, որը վերջերս լույս ընծայվեց ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչության կողմից[2]։

Նշված աշխատության մեջ տրվում է հարցի ամբողջական ուսումնասիրությունը՝ հիպոթեզը քննարկվում է թե՛ որպես իմացության օղակ և թե՛ որպես մտածողության ձև, ընդ որում այդ արվում է ոչ թե իրարից անջատ, այլ միասնության մեջ։ Պարզաբանելով հիպոթեզի նպատակը, հեղինակը վկայակոչում է տրամաբանական գրականության մեջ հիպոթեզի հայտնի սահմանումները և հակիրճ վերլուծում դրանք։ Այդ վերլուծությունից ակնառու է դառնում հայտնի մի շարք սահմանումների, մասնավորապես հիպոթեզը որպես «ենթադրություն պատճառի մասին» սահմանման անբավարարությունը։ Գիտության մեջ լայն ճանաչում գտած մի շարք հիպոթեզների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիպոթեզի հասկացությունն ավելի լայն է, ուստի ճիշտ է հեղինակը, երբ գրում է. «Հիպոթեզը գիտական հավանական տեսություն է, որի մեջ բխեցված և հիմնավորված է գիտական ենթադրություն փորձից հայտնի երևույթների հիմքում ընկած օրինաչափ կարգի կամ փաստի մասին։ Ընդ որում ներկայումս թեպետև բավարար հիմքեր չկան այդ ենթադրությունն անվերապահորեն ապացուցելու համար, բայց նրա ընդունման շնորհիվ բացատրելի են դառնում փորձից հայտնի երևույթները» (Նշված աշխատության էջ 20—21)։

Հեղինակն ուսումնասիրում է հիպոթեզը նախ որպես մտքի ձև և այդ իսկ առումով հանգամանորեն կանգ առնում նրա կառուցման ընթացքի և ըստ տրամաբանական կառուցվածքի դասակարգման վրա։ Ինչպես նշվում է, հիպոթեզի կառուցումը, որպես կանոն, անցնում է երեք փուլ. 1. տվյալ բնագավառին վերաբերող փաստերի հնարավորին չափ լրիվ ուսումնասիրությունը, 2. գիտական ենթադրության ձևակերպումը և 3. արված ենթադրության գիտական արժեքի հիմնավորումը։ Հիպոթեզի կառուցման ընթացքի լուսաբանման համար հեղինակը վերլուծում է Դարվինի էվոլյուցիոն տեսության ստեղծման պրոցեսը։ Սա ոչ միայն հաջող վերցրված օրինակ է, այլև բնորոշում է հետազոտության բնույթն ընդհանրապես, որովհետև Դարվինի տեսությունը բնագիտության մեջ դիալեկտիկական մտածողության կիրառման փայլուն նմուշ է։ Այսպիսի ճիշտ ընտրության շնորհիվ հեղինակը կարողացել է ցույց տալ, որ հիպոթեզի կառուցման պրոցեսը դիալեկտիկական պրոցես է։

Աշխատության մեջ լուսաբանվում են ինչպես հիպոթեզի հաստատման պրոցեսը, այնպես էլ գիտելիքների առանձին ճյուղերում հիպոթեզների կիրառման յուրահատկությունները։ Վերջինս առանձին հետաքրքրություն է ներկայացնում, որովհետև որոշակի տարբերություն կա գիտության փորձարարական (էքսպերիմենտալ) և տեսական մասնաճյուղերում հիպոթեզների կիրառման մեջ՝ ինչպես նրանց կառուցման, այնպես էլ և հաստատման տեսակետից։ Հեղինակը կարողացել է հստակ ցույց տալ, թե ինչպիսի տեղ են գրավում հիպոթեզները մեր իմացության սիստեմում, թե ինչպես առանձին գիտական հավանական ենթադրություններից մարդկային միտքը կառուցում է հիպոթեզների հոյակապ շենք, որտեղ նրանք, աստիճանաբար ճշտվելով, իրենց հերթին հիմք են հանդիսանում նոր ու նոր հարկերի կառուցման համար։ Եվ, ինչպես բրավացիորեն նշում է հեղինակը, այն հանգամանքը, որ մեր գիտելիքների մի

[2] Հ. Ա. Գևորգյան, Հիպոթեզը և նրա դերը գիտության մեջ, 1959, 120 էջ։

խոշոր մասը կազմում են հիպոթեզները և այնպիսի տեսությունները, որոնց հիմքում ընկած են հիպոթեզներ, ամենևին էլ չի արձանագրում գիտությունը։ «Եթե նույնիսկ այս կամ այն հիպոթեզը սխալ է դուրս գալիս, ժխտվում է,— նշում է հեղինակը,— ապա նրա վրա կառուցված տեսությունների շենքը հիմնովին չի փլուզվում։ Այդ շենքից ոչ թե առանձին բեկորներ, այլև հաճախ ամբողջ կառուցումներ մնում են և, որպես տեսական մտքի անվիճելի նվաճումներ, դառնում են գիտության հետագա տեսությունների բաղկացուցիչ մասը» (էջ 95)։

Հետաքրքիր են աշխատության «Աշխարհայացք և հիպոթեզ» բաժնում արծարծված հարցերը։ Զարգացնելով երկրորդ գլխում փաստերով համառոտակի հիմնավորված այն միտքը, որ «տվյալ ժամանակում տիրապետող գաղափարական-մեթոդոլոգիական տեսակետները իրենց արտացոլումն են գտնում գիտելիքների համարյա բոլոր ընագավառներում կառուցվող հիպոթեզներում», հեղինակը ցույց է տալիս հիպոթեզի և ընդհանրապես ճշմարտության ըմբռնման հարցում մատերիալիզմի և իդեալիզմի հակադրությունը և բացահայտում իդեալիզմի բոլոր տարբերակների ու նրանց վրա հենվող տեսությունների լիակատար սնանկությունը։ Հեղինակը ոչ թե սոսկ քննադատում է իդեալիստական ըմբռնումը, այլ գիտականորեն հերքում հատկապես արդի իդեալիստների (Ռասելի, Այերի և այլոց) տեսակետները։ Ինչպես բացահայտել են Ֆ. Էնգելսը և հատկապես Վ. Ի. Լենինը իր «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» հանճարեղ աշխատության մեջ, օբյեկտիվ ճշմարտության իմացության պրոցեսը դիալեկտիկական պրոցես է, որի ընթացքում մեր գիտելիքները, արտացոլելով շրջապատող աշխարհը, կանգնած չեն մի ինչ-որ կետի վրա, այլ անվերջ լրացվում և հետզհետե ավելի խորն են արտացոլում շրջապատող աշխարհի երևույթների ու պրոցեսների էությունը և դրանով իսկ անվերջ մոտենում բացարձակ ճշմարտությանը։ Դրա հետ միասին պետք է նշել, որ մեր գիտելիքները, օժտված լինելով հարաբերականությամբ, ամենևին էլ բացարձակորեն հարաբերական, պայմանական, հիպոթետիկ (սոսկ հավանական) չեն, ինչպես հավատացնում են անցյալ և արդի սուբյեկտիվիստները, այլ պարունակում են բացարձակ ճշմարտության, աշխարհի սպառիչ իմացության հատիկներ։

Նորագույն ագնոստիցիզմը տեսնում է միայն մեր գիտելիքների մեջ եղած հարաբերականության մոմենտը և, բացարձակացնելով այդ, ժխտում է բացարձակ ճշմարտության մոմենտը, հանգելով նաև օբյեկտիվ ճշմարտության ժխտմանը։ Ինչպես ցույց է տրվում աշխատության մեջ, նորագույն ագնոստիցիզմը անտեսում է մեր գիտելիքների մեջ եղած բացարձակ ճշմարտության մոմենտը, վերցնում է դրանց միայն հարաբերականությունը և դրանք՝ որպես միմիայն հարաբերական ճշմարտություններ, նույնացնում է հավանական գիտելիքների հետ, մեր ամբողջ իմացությունը համարելով հիպոթետիկ։ Այստեղ գիտակցաբար նույնացվում են երկու տարբեր կատեգորիաներ՝ հարաբերականն ու հավանականը։ Հեղինակը որոշակիորեն ցույց է տալիս, որ երբ խոսքը հավանականության և հավատարիության մասին է, ապա քննարկման տեսանկյունը այլ է, քան հարաբերական և բացարձակ ճշմարտության փոխհարաբերության հարցում։ Այստեղ պետք է վերցնել զարգացման մի այլ գիծ՝ կոռնում —հավանական տեսություն (այն է՝ հիպոթեզ) — հավաստի տեսություն (այն է՝ օբյեկտիվ ճշմարտություն)։ Ճիշտ է հեղինակի այն պնդումը, որ «հավանական գիտելիքը չի կարելի նույնացնել հարաբերական գիտելիքի հետ, որովհետև

միայն և միայն հարաբերականությամբ օժտված գիտելիքներ չկան։ Այնինչ հավաստի գիտելիքը՝ որպես օբյեկտիվ ճշմարտություն, իր մեջ պարունակում է հարաբերականության և բացարձակության դիալեկտիկան» (էջ 116)։

Հարցի տեսական շարադրանքը աշխատության մեջ զուգակցվում է հարուստ փաստական նյութի՝ գիտության մեջ հայտնի մի շարք հիպոթեզների վերլուծությամբ։ Ընդ որում հասարակագիտության, պատմության, ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, աստղագիտության, կենսաբանության և գիտության այլ բնագավառներից շարադրանքի մեջ օգտագործված հիպոթեզները չեն դարձել օրինակների գումար, այլ համակցվել են մի ամբողջության մեջ, ցույց տալով հիպոթեզի և գիտական կանխատեսման համապարփակ կիրառումը գիտության մեջ ընդհանրապես։

Մի քանի խոսք հիպոթեզի կառուցման մասին աշխատության մեջ արծարծված սխեմայի մասին։ Այդ հարցին նվիրված գլխում հեղինակը նշում է, որ հիպոթեզի կառուցումն սկսվում է տվյալ բնագավառին վերաբերող փաստերի հնարավորին չափ լրիվ ուսումնասիրությունից, իսկ վերջինս ընդգրկում է՝ ա) մինչ այդ գիտության կուտակած փաստական նյութը և բ) հիպոթեզի կառուցման ժամանակ կատարվող անմիջական դիտումները։ Ընդ որում, այս փորձնական նյութն է ցույց տալիս, որ բացատրության հին եղանակները բավարար չեն, և խթանում է միտքը՝ որոնելու նոր բացատրություն։ Սրանից հետո հեղինակը որպես հաջորդ փուլ նշում է գիտական ենթադրության ձևակերպումը։

Այստեղ, մեր կարծիքով, միտքն ընթանում է մի փոքր այլ կերպ՝ եղած փաստերի կամ նորահայտ փաստերի հիման վրա նախնական կռահում է կատարվում, ապա նոր միայն նպատակադիր ուսումնասիրվում են փաստերը, կատարվում են, նույնպես նպատակադիր, անմիջական դիտումներ, և դրանից հետո միայն ձևակերպվում է գիտական ենթադրությունը։ Այսպիսի մոտեցման անհրաժեշտությունը բխում է հենց աշխատության հետագա շարադրանքից։

Չնայած մասնակի մանր թերություններին, «Հիպոթեզը և նրա գերը գիտության մեջ» աշխատությունը շատ հարցերում ինքնուրույն և գիտական տեսակետից արժեք ներկայացնող աշխատություն է։

Մ. Մ. ՄԵԼԻՔՅԱՆ